

6118

6119

6120

6121

24579

24572

891.99

LL-68

891 99

ՍԱՀԱԿ ՏԵՐ-ԶԱՐՄՐԵԱՆ

ԿԱՂԿՈՎԴԱԲԻՇ ՄԵՐ

Վ. Եղիկի Արցախի կեանքից



Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ ՀԱ Թ Օ Թ Ա Ց Ա Զ Ա Յ Ա Յ Ա Յ Ա Յ

Տիլ. „ԱՐՈՐԻ“, Տ. յ. Նազարյան, Բարյան, սլ.

3872

ՄԱՍԿԱՆԴՈՒԱԾ ՄԵՐ

ԿԱԾԿԱՆԴՈՒԱԾ ՄԵՐ

ԳՅՈՒՄԱՐԻ ԱՐՏԱՎԱՐԱՐ

Дозв. Ценз. Тифлисъ, 11-го Февраля, 1893 г.

3691  
478



Ա.

բցախի կամ Ղարաբաղի բազմա-  
մարդ և հարուստ գաւառնե-  
րից մէկն էլ Զրաբերդն է, որի  
մէջ կան երեսուն և ութ հայա-  
բնակ և քառասունից աւելի թուր-  
քաբնակ գիւղեր:

Զրաբերդն ունի երկու մեծ գետ՝ Թարթառ և  
Խաչէն: Գաւառի արևելեան Ծմասը դաշտալին է,  
ուր բնակւում են զլիաւորապէս թուրքեր: Իսկ ա-  
րևմտեան մասը լեռնոտ է, ուր զետեղուած են  
Հայերի գիւղերը:

Զրաբերը, որ ալժմ կոչւում է Զիւանշիր՝ շատ առատ  
և պտղաբեր երկիր է: Ունի բարձր լեռներ և լեռնա-  
շղթաներ. հիւսիսալին կողմն է «Մոաւ», որից ըս-  
կիզբն է առնում Թարթառ գետը, իւր ծոցն ըն-  
դունելով բազմաթիւ գետակներ և առուակներ, ո-

բոնց հետ միանալով դառնում է մի մեծ և աշեղագոյ գետ։ Ապառաժոտ, նեղ, խոր ձորակների և լեռների միջից սա որոտալով՝ և ոռոգելով դաշտերը, Հայոց Պարտաւ աւերակ քաղաքի հիւսիս-արևելեան կողմից թափւում է Կուր գետը։

Գաւառի արևմտեան կողմն է Քիրա, լեռնաշղթան, որից սկիզբն է առնում Խաչէն գետը, որ նոյնալիս ընդունելով իւր մէջ շատ գետակներ և առուսակներ՝ Հարիւր լիսուն վերստ հոսելով միանում է Թարթառ գետի հետ և Արաշ գաւառից ոչ հեռու թափւում է Կուր գետի մէջ։

Զրաբերդում կան շատ Հայոց վանքեր, որոնք հարուստ են եկեղեցական կալուածքներով։ Վանքերից հինգն աւելի նշանաւոր են—Գանձասար, Յակովի Հայրապետ, Խոթա, Երեք-Մանկունք և Ինն մաս, որոնք նշանաւոր և հոչակաւոր ուխտատեղիներ են։

Գանձասարը գտնւում է Խաչէն գետի վրայ Քիրա, լեռների ստորոտում։ Վանքն ունի իր մօտ 200 օրավարից աւելի հող, շատ կալուածներ և մի քանի ջրաղաց, այստեղ է գտնւում մեծանուն Հատան-Ջալակեանների իշխանական հին ցեղը, որ մեծ կտլուածների տէր է։

Գանձասարից ոչ հեռու կըտեսնես Յակովի Հայրապետի վանքը, որի պարսպապատ շինութիւնները բարձրանում են մի բարձր լեռան գագաթին։ Այս վանքն ունի իր մօտ 140 օրավար հող, ընդարձակ անտառներ, երկու ջրաղաց և մի գեղեցիկ այգի, որ

լիքն է զանազան պտղատու ծառերով։

Թարթառ գետի սկզբում՝ Մռաւ, և Քիրս, լեռների ստորոտների բարձր բլուրների մէջ, խոր ու մութ անտառներում կըտեսնես Խոթա վանքը, իւր կիսաւէր նսիրական շէնքերով։ Վանքի շըակալքում գտնւում են աւերակ մատուռներ, ճարտար քանդակած շիրիմներ և հողին հաւասար թաղւած խաչքարեր։ Խոթա վանքն ունի տասն և հնգից աւելի գիւղեր, որոնց բնակիչները վանքն են իրանց տէր ճանաչում։ Նրանք բոլորն էլ մահմետականներ են՝ մի մասը թուրքեր, միւս մասը քրդեր. հայ ասածդ այնտեղ ամիսներով մի հատ չես գտնիլ։ Վանքապատկան հողերի մեծ մասը՝ խիտ անտառներ են և մնում են բոլորովին անօգուտ, միայն մի մասը կապալով են առնում թուրք բնակիչները հինգ վեց տարի ժամանակով, տարեկան վճարելով Սրցախի Հայոց հոգեոր իշխանութեանը մի քանի հարիւր ըուբելի, որ մեծ գժուարութեամբ է ստացւում։

Երեք-Մանկունքն իւր հիասքանչ և շքեզազարդ տաճարով գտնւում է Մռաւ, լեռան արեւելեան վեշերի վերայ՝ քարքարոտ բլուրների մէջ։ Թէւ Երեք-Մանկունքը շատ քիչ հող ունի՝ բայց բոլոր վանքերից հարուստ է. նորա հողերն ամայի և անմարդաբնակ են, քսանուհինք վերստաչափ հեռաւորութեան վերայ ոչ մի գիւղ չըկալ։ Յարութեան և Վարդավառի տօներին բազմաթիւ ուխտաւորներ են գալիս և առատ նուէրներ են բում վանքին։

Ինն-Մասը գտնւում է գաւառի կենդրոնում  
մի փոքրիկ գետակի վերայ՝ լեռների և ծմակների  
մէջ. համարեա բոլորովին հող չունի, միայն մի  
ջրաղաց ունի: Վանքի միաբանութիւնը ապրում է  
շրջակայ գիւղերից եկած ուխտաւորների տուած  
նուէրներով:

Ջրաբերդն, ինչպէս ասացինք, մի գեղեցիկ և  
արդասաւէտ երկիր է. նորա մէջ կան շատ պար-  
տէզներ, այդիներ, տոռզարար և քաղցրահամ աղ-  
բիւրներ, խիտ և սքանչելի անտառներ՝ լիքը զա-  
նազան վայրենի կենդանիներով և ժուչուններով:  
Ամեն մի գիւղ ունի առանձին մի գետակ, որ ոռո-  
գում է այն գիւղի բոլոր պարտէզներն ու դաշտե-  
րը: Գիւղացիների մէջ հին նահասկետական սովո-  
րութիւնները մինչև այսօր գեռ պահպանուած են.  
Նրանց որդիքը, թէ աղջիկ թէ տղայ, հինգ վեց  
տարեկան հասակից պէտք է անշուշտ պաս պահեն,  
եկեղեցի գնան, քահանային ողջունեն և այն:

Այս գաւառի երիտասարդները շատ քաջ են:  
Երիտասարդների մեծ մասը պարապում է հովու-  
թեամբ. կըտեսնես որ տասը տարեկան տղաները,  
շատ լաւ զինուած՝ մի մեծ հօտ կամ նախիր արա-  
ծացնելիս գիւղից շատ հեռու: Նորա համար փոյթ  
չէ, եթէ գիշերն էլ վրայ հասնի. ամբողջ գիշերը  
նրանք մութ գաշտերում կամ լեռների ու անտառ-  
ների խորքերում սրինգը բերաններին մինչև արևը  
ծագելն քաղցը և ներդաշնակ եղանակներ ածելով  
արածացնում են իրանց հօտերը: Սիւնեաց ամբողջ

աշխարհում մինչև այսօր աղջիկ փախցնելու սովո-  
րութիւն կայ: Հայերի և թուրքերի լինաները,  
այսինքն՝ անասունների գոմերը, որոնք գտնւում են  
գիւղերից տասը-քսան վերստ հեռաւորութեան վե-  
րայ, գեր են խաղում կեանքի մէջ:

Նրանց գոմերն և վրանները տեղաւորուած են  
մէկը մէւսից տասը քսան քայլ հեռու: Նատ ան-  
գամ ըինաններն և վրանները երեսունից աւելի են  
լինում, այդտեղ գիւղացիներն այնպէս սիրով են  
ապրում, ինչպէս մի տան անդամներ: Այստեղ լի-  
նում են նորահաս աղջիկներ և քաջառողջ երիտա-  
սարդներ: Այս երիտասարդներն և երիտասարդուհի-  
ներն մի ամսի չափ իրար հետ ապրելով, սիրահար-  
ւում են միմեանց հետ:

Այսպիսի սիրային յարաբերութիւններ շատ  
անգամ տեղի են ունենում մինչև անգամ մօտեկ  
ազգականների մէջ: Նրանց սիրահարութեան լուրը  
շուտով տարածւում է ժողովրդի մէջ և հասնում է  
նրանց ծնողների ականցին: Եթէ սիրահարները մօտ  
արենակից ազգականներ են լինում, այն ժամանակ  
ծնողները ընդդէմ են լինում այսպիսի ամուսնու-  
թեան և աշխատում են նրանց իրարից բաժանել և  
հեռացնելով ջնջել սիրով կրակը նրանց սրտերից.  
Բայց յաճախ արդէն ուշ է լինում և անկարելի:

Վերջ ի վերջոյ տղան և աղջիկը ծնողների  
թուք ու մուրից ազատուելու համար վճռում են  
գիւղից հեռանալ: Մի քանի ժամանակ նրանք մը-  
նում են խիտ և մութ անտառների մէջ և շուտով

լուր է տարածւում, որ մի գիւղում կամ վանքում  
փողի շնորհիւ տգէտ տէրտէների և վանահայր  
վարդապետների ձեռքով նրանք պսակուած են: Սյ-  
նուհետև խեղճ ծնողները չայոց հոգեւոր կոնսիստո-  
րիայի փողասէր ատենապետից սկսած մինչև վերջին  
գրագրի ոտքերն են լիզում: Նրանց առաջին խօսքը  
—հարիւր երկուհարիւր մանէթ պահանջելն է. մի  
կոպէկ պակաս անկարելի է: Խեղճ աղքատ գիւղացին  
ստիպուած, ծախում է իւր լծկան գոմէշը կամ եզը  
և մի քանի մանէթ ձեռք բերելով, վճարում է այդ  
անակնկալ պարտքը: Սակայն ինչ շահ...

Եթէ մտնելու լինիս Դարաբաղի երեք գաւառ-  
ների՝ Վարանդայ, Խաչէն և Զրաբերդի գիւղերը կը  
տեսնես, որ բոլոր գիւղացիները միմեանց բարեկամ-  
ներ են, եթէ քննելու լինես դրանց այդ խառնա-  
շփոթ բարեկամութիւնները, կրտեսնես, որ մինչև  
երեք աստիճանի ամուսնութիւն կայ, որ Հայոց ե-  
կեղեցական օրէնքին հակառակ է: Սյդ պատճառաւ  
երբ ազգականների և մինչև անգամ երրորդ սերուն-  
դի մէջ սիրահարութիւն է լինում, երիտասարդն  
առնում է իւր սիրուհուն և քաշւում է անտառնե-  
րը. մի աղահ—տգէտ հոգեսրականի ձեռքով ծա-  
ծուկ մի քանի տասնեակ մանէթով ամուսնում է:



Բ.

ունիս ամսուայ տմա-  
րակին գեղեցիկ գիշերնե-  
րից մէկն էր:

Լուսինն ամպերի միջից  
իւր գէմքը մէկ-մէկ ցոյց  
էր տալիս արարածներին և կրկին թագ  
կենում: Ամբողջ երկրում տիրում էր  
խոր լոռութիւն: Խաղաղ էին լեռնե-  
րը, խոր քնի մէջ էր հովիւր և լոռ  
էին թռչունները. միայն երբեմն  
լսելի էր լինում գիշերային թռչուն-  
ների բուոցը:

Անտառի խորքերում թափառում էին վայրենի  
գագաններն իրանց համար որս գտնելու: Սյդ գե-  
ղեցիկ և զմալլելի միջոցին երկու արարածներ չէին  
քնած՝ Խաչօն և Մարիամը:

Ճ. գիւղի արևմտեան կողմի փոքրիկ և գեղե-  
ցիկ այգիներից մէկում, դարաւոր բարձր ընկուզե-  
նիի տակ նստած իրանց վերջին վճիռն էին դնում.  
«Փախչել և հեռանալ այստեղից», ասում էր Մա-

րիամը, ձեռքը դնելով Խաչօլի ափերի մէջ և վիզը ծռած լուսնին նայելով.— «Տես, տես, Խաչօ ջան, այս գիշեր լուսինն այնպէս շուտ շուտ է վազում, որ... Ոչ, սիրելիս, դրանք ամպերն են, որխումբի լուսնի տակով վազելով անցնում են», ասում էր Խաչօն, սեղմելով օրիորդի ձեռքը և համբուրելով նրա լայն, քնքոյշ ճերմակ ճակատը:

Ո՞հ, ինչ մեծամեծ բարիքներ է տուել մարդիս նախախնամութիւնը. ինչքան քաղցր և գիտած է նա գէպի մարդկութիւնը:

Ինութեան Արարչի տուած անժիւ պարգևներից և շնորհներից մէկն էլ գեղեցկութիւնն է. որքան երջանիկ են գեղեցիկները, որքան այլ և ալլ տպաւորութիւններ է թողնում սիրունութիւնն իւրաքանչիւր հասակի և շրջանի վերայ և որչափ մեծ է նրա աղդեցութիւնը սեռերի վերաբերութեամբ: Այդ բաղդաւորութեան և գեղեցկութեան գովասանքին արժանի էր Մարիամը. նա գիւղի գեղեցիկն էր... նաևիր նրա լայն ճակատին, որի ստորին կողմը կամար են կապել երկու թանձը, թուխ և համահաւասար յօնքեր: Տես նրա սե մազերի հիւսերը մինչև ծնկները կախ ընկած. կարծես, բնութիւնը ինքըն է հիւսել իւր անտեսանելի ձեռքերով այդ հազուագիւտ, չքնաղ օրիորդի թիկունքը զարդարելու համար: Նա մի բարձրահասակ, վայելչակազմ, տասն և ութ տարեկան աղջիկ էր: Նրա դէմքի վերայ կարդացւում էր քաջութիւն և հաստատամտութիւն: Ամեն մի խօսք արտասանելիս, կարծես բե-

րանից մարգարիտ էր թափւում: Այո՛, գեղեցիկ էր նա, որի ամեն մի ակնարկն ու հրապոյըը մի լուսպէի մէջ կը հալէր ու կը մաշէր ամեն մի երիտասարդի սիրան ու հոգին: Ո՞հ, որքան կեանք, որքան զրաւիչ զօրութիւն, որպէսի գիւթիչ հայեացք: Ո՞վ կարող էր չխոնարհել այդ նայուածքի առաջ, երբ նա իւր երկար ու խիտ արտեանունքը միմեանց խփելով իւր սրտի զգացմանցը նրան հաղորդ անել ցանկանար:

Մարիամը հագնում էր բուն Ղարաբաղի հագուստ. գեղնագոյն շապիկ, կարմիր արխալուխ, գլուխի կապում էր մետաքսից կարմիր թաշկինակ, մէջքին կապում էր արծաթեայ գոտի և ոտքերին հագնում էր կտրմիր ու կանաչ հողաթափներ: Խաչօն նոյնպէս բարձրահասակ էր, բայց աչքերն աւելի մեծ-մեծ էին ու դէմքը կարմիր. նրա կուրծքը շատ լայն և գնացքն ուզիղ էր, մի քաջառողջ, քսան և երկու տարեկան երիտասարդ էր: Հագնում էր պարսկական չուխայ, զլիխն գնում էր մորթուց կարած պարսկական փափաղ, նրա արծաթեայ գոտիից կախած էին՝ ձախ կողմից մի երկար ու կեռ դաշոյն և աջ կողմից մի ատրճանակ: Խաչօն շատ էր սիրում զէնքեր. նրա կուրծքը ծածկուած էր զանազան որսորդական զէնքերով: Նա միշտ սիրում էր լուսաբացին հրացանը ձեռքին որսի գնալ և դատարկ տուն չէր վերադառնում: Խաչօն սկսաւ Մարիամին զանազան հարցեր առաջարկել՝ փորձելով նրա մէրն ու հաւատարմութիւնը: — Իմ ան-

նման և պաշտելի Մարիամ, ասում են, որ Յարութիւնը մօրդ մօտ մարդ է ուղարկել, որ Հարսանիքի պատրաստութիւն տեսնէ: Նա ուզում է շուտով ամուսնանալ. չլինի՞ թէ մեր մասին մի բան լսած լինի, և ես այսօր կամ վաղը ստիպուած պիտի լինիմ ինձ փորձանքի ենթարկել չժողնելու համար, որ գու արտասուքդ երեսիդ մօրդ գերի լինես, և ամուսնանաս այն մարդու հետ, որին գու չես սիրում և որը քո սրտի փուշն է և ինձ թշնամի:

Ասա վճռականը, մի ամաչիր, Մարիամ, սիրում ես ինձ, և ինձ հետեւելու ես. պատրաստ ես ինձ հետ ընկեր լինել բաղդաւորութեան և դըքաղդութեան մէջ: Ես պատրաստ եմ ամեն բան անել. քեզ համար արիւն թափել և քեզ իմ կինը դարձնել: Իմ փառքս ու ուրախութիւնս միայն դու ես. քեզանով եմ ես կենդանի, քո սէրն է, որ ապրեցնում է ինձ: Այս խօսքերն Մարիամը լսելով ժպտում էր: Նրա երեսին երևեցան ուրախութեան և դառնութեան արտասուքներ... Խեղճի ձեռները կծկուել գողում էին. լեզուն մի բառ արտասանել չէր կարող. նրա կուրծքը բարձրանում և իջնում էր: Տիրեց մի փոքր լուսութիւն. Վերջապէս շշնչաց օրիորդը, ձեռքի թաշկինակով սրբելով երեսի կոլոր, սառն արտասունքները: — «Երելի Խաչօ, իմ պաշտպան, իմ հոգեակ, աղաչում եմ քեզ՝ լուսուրով, որ դու ես միայն իմ խնամակալը և ինձ մահի ճանկերից ազատողը. Ես պատրաստ եմ քեզ հետ մեռնել և քեզ հետ ապրել. ինձ տար, ինձ աղա-

տիր, Ես քեզ հետեւողն եմ. ուր որ գնաս, քո հաւատարիմ լնկերն եմ, առանց քեզ ես կորած եմ: Յարութիւնին չեմ սիրում. . նա... իմ աչքի դևն է...: Օրիորդն այլ ևս մի բառ արտասանել չկարողացաւ. Նրա ձայնը կոկորդի մէջ խեղդւում էր:

Խաչօն տեսնելով Մարիամի դրութիւնը, աշխատեց նրան սիրտ տալ. — ուրեմն մենք բախտաւոր ենք, ասաց Խաչօն, դու ինձ ընկեր եղիր և ինձ հետեւիր, իմ առաջ ահռելի գազանը ևս կը գողայ. քո ներկայութիւնը ինձ հոգի ու շունչ է տալիս և ես բախտաւոր եմ քեզանով... ես կը փորձեմ իմ սրի ոյժը այն մարդկանց վերայ, որոնք աշխատում են քեզ իմ գրկից խլել. ես Յարութիւնին իմ կեռ խենչալով այնպէս մաս-մաս կանեմ, ինչպէս աղաների համար ծեծած գոլմի, միս: Խաչօն այս խօսքերը շատ ոգևորուած ասելով ձեռքը ձգեց օրիորդի թիկունքին, քաշեց դէպի իրան և ագահարար համբուրում էր աղջկալ ձերմակ լայն ճակատը: Այդ րոպէն շատ թանգ արժէր Մարիամի համար. Նրա երեսին երևում էին ուրախութեան ժըպիտներ: Խնչ էր այն երեկոյեան երկու սիրահարների վճիռը և ինչ էին ուզում անել: Այս, նըրանք պայմանաւորուում էին միւս օրը երեկոյեան փախչել գէպի խոր ու մութ անտառները և մի առ ժամանակ թագնուել անտառների մութ անկիւններում, ազատուել Յարութիւնի ձեռքից, պաշտպանուել թշնամիներից, մանաւանդ որ ծնողները աշխատում էին հանգնել նրանց սէրը և բաժանել միմեանցից:

Իմ՝սիրելի Մարիամ, արդէն գիշերուայ կէսն  
անցել է, մայրդ քեզ փնտուում կը լինի և գուցէ  
բանը բացուի և մեր մտադրութիւնը խանգարուի.  
գու գնա տուն մօրդ մօտ. եթէ հարցնելու լինի  
քո տանից բացակայելու մասին՝ ասա որ Ղազունց  
տանն էի, Ղազի պապը հեքիաթներ էր ասում  
և մենք ականջ էինք դնում:—Ո՛չ, Խաչօ ջան, ես  
կարող եմ աւելի հասարակ սուր փաստերով խաբել  
մօրս. նա շատ միամիտ կին է, ինչ որ ասելու լի-  
նեմ, նա անշուշտ կը հաւատալ. ես ամեն մի քայ-  
լափոխում կարող եմ մօրս խսփել. բայց հասկացած  
լինիս, որ մեր զայլի սիրոտ կերած հարսը շատ՝ խո-  
րամանկ է. իմ ամեն մի քայլերիս նա հետամուտ  
է. նա քեզ չի սիրում. գիշեր-ցերեկ աշխատում է  
ինձ համոզել Յարութիւնին սիրել և քեզ մոռա-  
նալ: Ես նրան միշտ ատել եմ և ատում եմ. նա  
իմ ամուսինս լինել չէ կարող: Ուրեմն դու գնա,  
ես վաղը երեկոյեան այս ժամանակ քեզ կը սպա-  
սեմ:

Սիայն մի քանի համբուլներ էին, որ նրանց  
երկար խօսակցութեան վերջ տուին։ Հինգ ըռպէից  
յետոյ Մարիամը իւր մօր մօտ էր։ Իսկ Խաչօն ծ.  
գիւղից Գիւլեաթաղ գիւղը տանող զառիվալը ճա-  
նապարհով գնում էր։ Նրա մտքովն անցնում էին  
շատ բաներ. սիրտը մեծ ալեկոծութեան մէջ էր։  
Երկու ժամից յետոյ նա անկողին մտաւ. նրանց  
տունը, որ կը լուսում էր Բըուտանց տուն, Փ. գիւղի  
հարաւալին մտսումն էր, կպած սուրբ Աստուածածին

Եկեղեցւոյ պլատին. Խոր ու մուլթ, մի քայլքայուած խըճիթ էր:

Ո՞վ էր Յարութիւնը, և ինչու համար պէտք  
է արգելք լինէր նրանց սէրն։ Յարութիւնը ծ. գիւ-  
ղացի էր. արդէն երեք տարի էր, որ նա նշանուած  
էր Մարիամի հետ. նրա ոսկի մատանին և գիւղա-  
կան այլ և այլ ոսկի և արծաթի կրծկալներն ու  
ականջի օղերը զարդարում էին Մարիամի կուրծքն  
ու ականջները. վաղուց էր արդէն օրհնել նրանց  
սուրբ նշանը ծ. գիւղացի Տէր Յարութիւնը։ Թէ-  
պէտև օրհնուած էր Մարիամի և Յարութիւնի  
սուրբ նշանը կրծկալներն ու մատանիները, թէ-  
պէտև այդ ոսկին և արծաթը Յարութիւնին էր  
պատկանում, նա մեծ փողեր էր մախել այդ ոսկու  
և արծաթի վերայ, թէպէտև Յարութիւնը շատ էր  
սիրում Մարիամին և գիշեր ցերեկ նրանց շէմքից  
ոտքը չէր հեռացնում, բայց Մարիամը նրան չէր  
սիրում. ատելով ատում էր նրան։ Օբիորդը այդ ե-  
րեք տարուայ ընթացքում Յարութիւնի երեսը գեռ-  
չէր տեսել և հետն էլ չէր խօսել։ Այդ նշանները,  
որ կրում էր Մարիամը՝ ակամայ էր կրում. նա մի-  
այն իւր մօր Անթռամի տուած քօթակներից ստի-  
պուած ընդունել էր։ Ուրիշի կրծկալներից և օղերի  
զնկզնկոցը նա չէր սիրում, շատ խորթ էր թւում  
օրիորդի աչքին, այդ ոսկին և արծաթը նրա մարմ-  
նի փուշն էին։



Էր... բայց իւր մտքերին վերջ չէր գտնում:—Թող  
միայն ապրեմ իմ սիրած երիտասարդի հետ. թող  
լինեմ իմ Խաչօխ մօտ, մութ անտառը ինձ կազա-  
տէ ամեն մի ցաւերից, ծնողների թուք ու մուրից  
—և ինձ միայն կունենամ մի պաշտպան, մի խը-  
նամակալ և մի ազնիւ բարեկամ...—ես միայն կը  
ժապտամ Խաչօխ գրկում: Այս, ես պէտք է պատ-  
րաստուեմ և սպասեմ երեկոյեան Խաչօխ վերա-  
դարձն: Երբ որ Յարութիւնը գալիս էր զօքանչի  
տունը. թէպէտև նրան շըջապատում էին Մարիա-  
մի մայր Անթառամը, նրա մեծ աղջիկ Սոնան,  
Հարս Մանիշակը, և Մարիամի եղբայր Խաչօն. և  
ակսում էին կատակներ անել, երկար ու բարակ խօ-  
սալ, զանագան նիւթերի վերալ, սարքել մեծ ու  
ճոխ սեղան. բանալ փեսալ Յարութիւնի բերած  
կապոցի բերանը. հանել միջի զանագան քաղցր  
կանաչ կարմիր պտուղները, որոնց խեղճ Յարութիւ-  
նը մէկ-մէկ իւր ձեռքերով քաղել էր իրանց սեպ-  
հական պտղատու ծառերի բարձր ու փշոտ ճըղ-  
ներից, լուսալով որ Մարիամը մեծ ախորժակով  
կուտէ այդ քաղցրահամ պտուղները:—Բայց ոչ, օ-  
րիորդը, երբ որ տեսնում էր Յարութիւնին իրանց  
տանը, խեղճի գլուխը պտուտ էր գալիս. նա աշ-  
խատում էր տանից հեռանալ. որտեղից որ լինէր  
մի գործ էր ճարում, ասելով մօրը.—Մայրիկ, ես զը-  
նում եմ Ղազունց տունը. այնտեղ պէտք է երկար  
մնամ. որովհետև այս ինչ կուլպի նախշերը և կամ  
այս ինչ թաշկինակի գոյները, մէկը միւսից զանա-



Գ.

ռաւոտ էր, Մարիամը նստած պա-  
տըշգամբի վերալ դէպի հեռուն էր  
նայում. նրա սիրտը հանդիստ չէր.  
Կլիսումը անհիմն մտքեր թուշկոտում էին, ինչպէս  
օդի մէջ սլանող անմեղ թուշուններ: Այդ օրը նրա  
համար տխուր... և շատ տխուր... օրերի մէկն էր.  
ինչ պէտք է անէր խեղճ աղջիկը... նրա վերալ մի  
ծանր լուծ էին դրել, նա պէտք է կրէր խոչընդու  
լծի ծանրութիւնը. նա կարծես վերջին հրաժարա-  
կանն էր տալիս իւր ծննդավայրերին, դէպի հե-  
ռուն երեղ սարերին ու անտառներին, իւր սիրած  
սննուդ տւող այգիներին ու պտղաբեր ծառերին:  
Նա պէտք է զրկուէր ընկեր աղջիկներից, դրացի-  
ների նորապասակ քնքոյշ հարսերից և նրանց քաղ-  
ցըր զրացներից. այս, նա պէտք է այդ ամենը թող-  
նէր և մոռանար... մոռանար քաղցը ծնողը, թան-  
գազին մալիկը, մինուճար հարազատ եղբօրը, և  
շըջապատ դրացիներին ու բարեկամներին, այս, պէտք  
է թողնէր և մոռանար, նա այդ ամենը մտածում

զանել չեմ կարողանում. Ղազունց Սովիան ինձ ցուց կը տալ. մինչև վերջացնելս այնտեղ կը մնամ. խնդրեմ ինձ չը կանչէք և գործս խանդարէք: Աղբէկ, իմար ես, խելքդ կորցրել ես, ինչ ես խելչե խօսում, ահա փառք Աստուծոյ, նշանածդ եկել է, բոլորս էլ պատրաստութիւններ ենք տեսնում. հարսն ու Սոնան միակ չեն կարող ամեն ինչ պատրաստել. մանաւանդ որ այս երեկոյեան պէտք է ձեր հարանեաց համար խօսենք. առանց քեզ ինչպէս կարելի է. պէտք է քո ներկայութեամբ ամեն ինչ խօսել. կարելի է նա շատ օժիտ է պահանջելու մեզանից: Զլինի թէ արծաթի քամար, ոսկի ժամացոյց ուզեց. այդ ամենը մենք ինչպէս կարող ենք տալ: Գոնեա հարանիքի ժամանակը մի տարի ես կը լետաձենք, մինչև որ կարողանանք տմեն ինչ պատրաստել:

ԱՌ-մարտիկ ջան, սիրելի մարտիկ... ինձ կախիր, խեղտիր, սպանիր, ինձ թուրքի տուր, քրդի տուր, միայն թէ Յարութիւնի անունը ինձ մօտ մի տալ. ես նրան չեմ սիրում, ես նրան սրտով ատում եմ. նա իմ աչքի դեն է: Մարտիկ, խղճա ինձ, իմ առաջի անգամն է, որ համարձակում եմ քեզ կետ այսպէս խօսել և իմ սրտի կրակը թափել քո առաջ. ես կը մեռնեմ, ես ինձ կը խեղտեմ և նրան չեմ գնալ. նրան կին լինել չեմ կարող: Ես միայն սիրում եմ Խաչօյին... Ալ ևս խեղճ օրիորդը մի խօսք բերանից հանել չըկարողացաւ և աչքերը լցուեցան արտասուքով: — Անթառամը իրաւունք

տուաւ Ղազունց տուն գնալու, յուսալով որ վաղը կամ միւս օրը կարող է նրան համոզել Յարութիւնին սիրելու: — Մարիամը նստած էր Ղազունց տանը շատ և շատ տխուր... արտասունք էր թափում աչքերից՝ անիծելով իւր սև օրը. միայն Սովիան էր նրան սիրու տուողը. նրա և Խաչօյին վերաբերեալ գաղտնիքները բոլորն էլ գիտէր Սովիան:

Դ.



արութիւնը թէպէտե զօքանչի մօտ նստած հանդիսականների կետ ուրախութիւն էր անում, թէւ արտաքուստ ձեւանում էր իբրև ուրախ, բայց շատ նեղ տնդ էր ընկած խեղճ տղան. նրա ցաւը մէկը չէր. նախ որ Մարիամը մօտը չէր. երկրորդ նա հաստատ գիտէր, որ աղջիկը իրան չէ սիրում: — Նա սիրում է մի օտար գիւղացու, նա չէ սիրում ինձ, ասում էր նա, թէւ ես նրան չափից դուրս եմ սիրում: Ո՛չ, ես պէտք է կազմեմ մի խումբ թուրքերից և հայերից և Խաչօյին սպանել տամ: — Այսպէս հարիւր մի մտքեր էր անցնում նըրան գլխովը: Պէտք է չըմոռանալ, որ Յարութիւնը ևս գեղեցիկ էր. նրա քաջակազմ հասակը և գեղեցիկ դէմքը շատ օրիորդների սիրու էր մաշում: Յարութիւնը Անթառամի տուած լոխերով խաբուած ևս նրան հաւատալով, ամբողջ երեք տարի լոկ լոյ-


սերով՝ սիրով բարեկամութիւն էր անում: — Մայրիկ,  
ինչ եղաւ Մարիամին, երբ պէտք է բերես մեր այ-  
գին, Ե՛րբ պէտք է այնտեղ պաղ աղբիւրի վերայ  
ոչխար մորթենք և քէֆ անենք: ...

Երբ որ դու ցանկանաս. հէնց կիրակի օրը.  
Մարիամի սանձը իմ ձեռքիս մէջ է, ուր որ ուզեմ,  
այն կողմը կը քաշեմ. ում որ փեսայ ընտրեմ,  
նա չի կարող ասել թէ չեմ սիրում և թէ չեմ  
գնալ: Դու միամիտ կաց. ամեն ինչ իւր կարգին  
կը լինի և Մարիամին էլ շուտով կը համոզեմ քեզ  
սիրելու: ...

Դիտես ինչկայ, Մարիամ ջան, որդի. երեկոյեան  
մենք փեսայ Յարութիւնի հետ վերջացրինք ամեն  
ինչ. նա շատ քիչ օժիտ է ուզում. մենք արդէն  
նրա պահանջները վաղուց ենք պատրաստած: Քո  
«Ողորմածիկ». Հայրդ մեռնելու ժամանակ, լիշում  
ես, որ ինձ քո ներկայութեամբ կանչեց մօտը և  
պատուիրեց, որ քեզ բացի Յարութիւնից ուրիշ ոչ  
ոքի չը տամ: Ուրեմն որդի, այժմ խօստումնազանց  
ես գարձնում ինձ. ես չեմ կարող քեզ Յարութիւ-  
նից զատ ուրիշ ոչ ոքի հետ ամուսնացնել: Ուրեմն  
պէտք է դու մոռանաս Խաչօյին և մոռանաս ամեն  
ինչ. միայն սիրես Յարութիւնին: Եթէ տանը մնա-  
լու էլ լինիս ու պառաւես, Խաչօյին չեմ տալու—  
չեմ տալու, հասկանում ես. ես ինչպէս քո ծնող՝  
իրաւունք ունիմ, ում կամենամ, ընտրեմ քո համար  
փեսայ, քո սանձն իմ ձեռքի մէջ է. գնա, լաւ մը-  
տածիր և վաղը ինձ մի հաստատ խօսք տուր: Մա-

նաւանդ որ, մենք երեկոյեան Յարութիւնի հետ  
պայմանաւորուել ենք, որ կիրակի օրը գնանք նը-  
րանց այգին և այնտեղ կը լինին նրա բոլոր բարե-  
կամները: Ի հարկ է, դու էլ սկսած է լինիս. առանց  
քեզ մենք չենք կարող գնալ:

Լաւ, մայրիկ, մինչև վաղը քեզ մի վճռական  
պատասխան կը տամ, կաշխատեմ Խաչօյին մոռա-  
նալ: — Ապրիս աղջիկս, արի երեսիցդ համբուրեմ,  
ես գիտեմ, որ դու իմ խօսքս գետինը չես ձգիր:  
Ուրեմն ես վաղը քեզանից հաստատ պատասխան  
կը ստանամ և Յարութիւնին իմաց կը տամ պատ-  
րաստութիւն տեսնելու: — Թո՞ղ Մարիամի մայրն ան-  
համբեր սպասէ վաղը աղջկանից՝ մի հաստատ պա-  
տասխան ստանալու և Յարութիւնին ուրախու-  
թեան լուր տանելու: ...



տից յաղթական գրօշակը ձեռքին տուն լինէր վերադառնում։ ծանապարհորդը մեր ծանօթ Խաչօն էր. նրա և Մարիամի փախչելու ժամադրեալ գիշերն էր։ Խաչօն անիծում էր իւր ծնուած օրը նորա համար, որ իւր մտադրութեան առաջին քայլում պատահեցաւ խոչնդոտի. նա երկիւղ էր կը ըստ ասելով՝ չըլինի թէ իմ ջանքերն անօգուտ անցնեն, անձրեւ խանգարէ իմ իղձը և Մարիամին ըլ յաջողուի մօր մօտից ազատուել, եթէ մեր որոշեալ տեղը նրան չըգտնեմ. ապա իմ ճարն բնչ կըլինի. ես բնչ երեսով կարող եմ առանց Մարիամին հետս ունենալու, իմ հաւատարիմ ընկերներիս մօտ գնալ՝ նրանց բնչ պէտք է ասեմ, բնչով կարող եմ նրանց մօտ ես արդարանալ... ախր նրանք ուզում էին իմ հետ գալ և ես խորհուրդ չէի տալիս։ Ոչ, ես չեմ կարող առանց Մարիամին... իձ հոգոյս հատորին հետս ունենալու, յետ գնալ իմ ընկերներիս երեսը։ Եթէ ես նրան իմ որոշած տեղը չըգտնեմ, պէտք է անպատճառ ուղղակի առուն զնամ և Մարիամիս գտնեմ։ Ապա ո՞ր օրուան համար է իմ զէնքերը և իմ կեռ խենչալը։ Ոչ, ես ոլէտք է գտնեմ նրան, նա վաղը իմ հետ կըլինի անտառի խորքերում։ Խաչօն արակէս ինքն իրան խօսելով գնում էր գէպի ծ. գիւղ. նրան շատ էր խանգարում անձրեւ և գիշերուայ մթութիւնը։ Յանկարծ զադարեցաւ անձրեւ, լուցին որոտմունքները, էր զերկեցաւ փայլակների այրիչ շանթերը։ Ամպերը կոյտ-կոյտ կարծես խօսք մէկ արած վերջին հրա-

ութ և մռայլ գիշեր էր. երկնքի երեսով գես ու դէն վազում էին սե-սե ամպերի կոյտեր միմեանց զարկելով մեծ որոտմունքներ էին բարձրացնում։ Խառնաշփոթ ամպերի և ահեղ որոտմունքների միջից մերթմերժ երկրի վերայ կատաղաբար մի ակնթարթի մէջ ցոլում էր փայլակը, զարկում էր ժայռերին իւր սուր և մահաբեր շանթերը, լուսաւորելով մթութեան մէջ կորած սար ու դաշտ, ցոյց տալով մի անհատի խաւարի մէջ կորցրած ճանապարհը, և կըկին մռայլ մուշտը կոխում էր երկրի երեսը, աչքից կորցնելով ամեն բնչ։ Սկսեց մաղել երկրի վերայ անձրեւ. կամաց-կտմաց անձրեւ սաստկացաւ։ Ալդ մահաբեր պահուն, խաւար մթութեան մէջ մէկը Գ. գիւղից զառիվայր ճանապարհ կտրած, իւր ծնւած օրը անիծելով, դէպի ծ. գիւղն էր գնում որսորդական գէնքերով զինուած, հովւական մէ ծ փայտը ձեռքին, կարծես պատերազմական դաշ-

Ժարականն էին տալիս կապոյտ երկնքին, անցնելով  
դէպի հարաւ:

Խաչօյի երեսին երեցաւ ուրախութեան ժը-  
պիտ. նա այժմ ուրախ էր, մի քանի քաղ ևս՝ նա  
արդէն կըհասնէր որոշեալ տեղը, ուր Սարիամն  
պէտք է սպասելիս լինէր իրան:

Խաչօն հասաւ ցանկապատին և շպրտելով ան-  
ցաւ ցանկապատից ներս. նա կանդ առաւ որոշած  
տեղը, այսինքն ընկուզենու տակ, մի քանի վար-  
կեան մնաց տեղն ու տեղը քար կտրած՝ նա ականջ  
էր գնում դէպի գիւղը տանող ճանապարհ և ոչինչ  
չեր լսում, միայն գիւղի շների հաջոցներն էր լըս-  
ուում: Նա մնաց երկմտութեան մէջ. ինչ անեմ, ա-  
սում էր նա, այսուհետեւ չի գալու. արդէն գիշե-  
րուայ շատ մասը անցել է, լսւ կըլինի, որ ես գը-  
նամ Մարիամիս մօտ: Խաչօն մի քանի անգամ ինքն  
իրան խորհուրդ էր տալիս, որ ուղղակի գնայ ան-  
ձամբ աղջկայ մօտ՝ բայց գնալու հնար չըկար, նա  
միայն հեռուից էր նրանց տունը տեսել, մինչև ան-  
գամ գնալու ճանապարհն էլ չէր իմանում. ինչ ա-  
նէր խեղճ երիտասարդը, մնացել էր շւարւած:  
Յանկարծ մթութեան մէջ նրա աչքովը մի ուրու-  
ականի պէս բան ընկաւ, նա տեսաւ, որ մի բան  
հեռուից գալիս է դէպի իրան. եկողը մարդի էր նը-  
ման. Խաչօն քաշուեցաւ դէպի ընկուզէնու մութ-  
շուաքը: Եկողը ուղղակի դէմ առ դէմ ծառի վրայ  
էր գալիս. նա կանգնեց ծառի մօտ, մէկ դէս ու  
դէն նայեց, ոչինչ չըտեսաւ: Դեռ ևս Խաչօն նրան

չէր ճանաչում, նա լուռ նայում էր եկողին: Եկողը  
փոքր աջ ու ձախ նայելուց, սկսեց ինքն իրան խօ-  
սել: —Ա՛խ, Աստուած իմ, Աստուած, այս ինչ փոր-  
ձանք է, որ իմ գլուխս է գալիս... Ելի չի եկել...  
Ա՛խ, Խաչօն, որտեղ ես... —Օրիորդը գեռ խօսքը չը-  
վերջացրած՝ յանկարծ Խաչօն ձայն տուեց...

—Մարիամ ջան... ահա ես...

Խաչօն մօտեցաւ դէպի հաւատարիմ ընկերու-  
հին, երկար գրկախառնութիւն և սիրոյ համբոյք-  
ներ էր, որ խառնուում էին միմեանց...

—Խաչօն, այստեղ էլ երկար սպասելու ժա-  
մանակ չէ...

—Այո՛, հարկաւոր է գիւղից խոյս տալ, ասաց  
Խաչօն:

Խաչօն և Մարիամը թե թե տուած, քաղցը  
զրոյց անելով ծ. գիւղից դէպի Դ. գիւղը տանող  
ճանապարհը ընկած գնում էին:

—Խաչօն, մէկ ասիր, մենք դէպի որ կող-  
մը պէտք է գնանք և ով պէտք է մեզ կերակըէ,  
մութ և խաւար լեռների ու անտառների խորքե-  
րում:

—Ո՛հ, սիրելիս, միթէ այդ մասին էլ ես մը-  
տածում: Ահա այս փոքր ծորակը անցնելուց՝ լեռան  
միւս երեսից մենք մեծ ճանապարհից կըբաժանու-  
ենք դէպի արեմուտ. կէս ժամ գնալուց՝ անտառի  
մութ անկիւնում ժայռերի մէջ կըտեսնես մի փոքր  
քարափ, որի մէջ իմ հաւատարիմ ընկերներս ինձ  
են սպասում: Ամեն բան այնտեղ պատրաստ է:

ՄԵՆՔ անտառում շատ ապահով կրթինենք:

Այնտեղ քարափի մէջ սպասում էին երեք քաջ երիտասարդներ, Գ. գիւղացի Խաչօյի անկեղծ և հաւատարիմ ընկերները. Հալրապետը, Օհանջանը և Մարտիրոսը: Նրանք անհամբեր սպասում էին Խաչօյի վերադարձին, բայց Խաչօն շատ էր ուշացել և ընկերներին գցել էր մտատանջութեան մէջ:

Ա՛խ, ինչու համար հետը ըզդնացինք, ասում էր Օհանջանը:

— Նա ինքն խորհուրդ չէր տալիս հետը գնալու, ուրեմն մենք ինչ մեղաւոր ենք, պատասխանում էր Մարտիրոսը:

— Միթէ չէք յիշում, որ ասում էր՝ բան է, եթէ ես ուշանալու լինիմ, դուք դէպի այն կողմը անցէք, կարելի է մի դժբաղդութեան եմ ենթարկւում... խօսում էր Հալրապետը:

— Ուրեմն գնանք...

— Ո՛չ, փոքր ինչ սպասենք...

Այսպէս խօսելով երեք քաջեր քարափից գուրս անհամբեր սպասում էին Խաչօյի վերադարձին:

Իսկ Խաչօն և Մարիամը Անտառների և ահազին ժարուերի միջով, քաղցր զըուց անելով, դէպի քարափն էին գնում:

— Մէկ ասա, Մարիամ, թէ դու ինչպէս կարդացար մօրդ խաբել և գիշերուայ կէսին հագնուել և տանից հեռանալ:

— Ապա թէ ինչպէս խաբեցի մօրս, պատասխանեց Մարիամը, — վաղօրօք ես իմ պատրաստութիւն-

ներս էի տեսել. ամբողջ օրը հին հագուստի մէջ մնալով, նոր հագուստս կապեցի բողջի մէջ և տեղաւորեցի պատուհանից ոչ հեռու: Երբ ցորեկով էլ տանը ոչ ոք չըկար, ես պատուհանի փակերը քաշեցի, որը մեծ աղմուկով էր բացւում, այդ բանը ոչ ոք չընկատեց: Երբ երեկոյ էր, բոլորն էլ պարկեցին քնելու, ես էլ մօրս հետ սովորաբար մի անկողին մտանք: Արդէն զիշերւայ մի մասը անցել էր, որ բոլորն էլ խոր քնի մէջ ընկան: Եւ ես օգտւելով այդ հանգամանքից, կամաց տեղիցս շարժուեցալ, մի քանի անգամ դիմելով մթութեան մէջ դէսու գէն և ինքս ինձի խօսելով, իբր թէ ծարաւ եմ և ջուր եմ փնտրում: Տեսնելով, որ ոչ ոք չէ արթնանում և ես կարող եմ նպատակիս հասնել, վերառայ շորերիս կապոցը, բացի պատուհան՝ դուք թուշելով պատուհանից՝ կրկին փակեցի դռները, փոքր դէսու դէն ականջ դնելուց յետոյ՝ հագայ շորերս և արագութեամբ սլացայ դէպի մեծ ընկույզենու տակ, ընալած, որ հորթ անձրեւ շարունակ թափում էր: Այնտեղ քեզ շատ որոնելուց կրկին յուսահատ վերադարձայ դէպի տուն. տան գաւթում փոքր սպասելուց՝ անձրեն էլ դադարեց և ահա երկրորդ անգամն էր, որ գալով քեզ ճարեցի...

Այդ քաղցր խօսակցութեան ըսպէին նրանց առաջ յանկարծ երևեցաւ քարափը և նրա պարսպի նման ժայռերը:

— ինչու այդքան ուշացաք, ինչ եղաւ ձեզ,  
հարցնում էին ընկերները:

— Ոչինչ, մեր ուշանալու պատճառն անձրւն  
էր միայն:

Նրանք քարափի մէջ փոքր ինչ զբոյց անելուց  
շուտով վերադարձան գիւղը, ազնիւ խօսք տալով,  
2ր վաղը երեկոյեան երեքով էլ տեսութիւն կըդան:

Արդէն արշալոյսը բացւում էր. նրանք պէտք  
է շուտ գիւղ հասնէին. որպէս զի ոչ ոք չիմա-  
նար նրանց գիշերւայ բացակայութիւնը:

— Զըմսունաք, վաղը շուտով մէկդ մեզ լուր  
բերել, հետևներից կանչում էր Խաչօն: Նրանք խոս-  
տացան տմեն ինչ անել և անցան ժայռերի ու ան-  
տառների միջով գէպի գիւղը:

## 2.



ուաւոտ էր, արշալոյսը նոր էր բաց-  
ւում. արեգակն իւր սուր գէմքը  
կարմրացրած, հօրիզոնից նայում էր  
գէպի արարած աշխարհին և իւր լուսափիւռ շո-  
ղերը տարածել էր իւր շուրջը: Թուշունները իւր-  
եանց դալլայիկ մեղեղին էին երգում, հովիւները  
նոր էին սկսել իւրեանց խաշները քշել գէպի արօ-  
տը... նոր էին գիւղացիները քնից արթնացել և  
մեծ աղմուկով տմեն մէկը իւր գործին էր գնում,  
մէկը իւր սիրելի լծկան եղան հետ ագարակ էր

գնում, միւսը սայլ լծած դէպին էր դիմում:  
Նորապսակ հարսներն ու չափահաս օրիորդները  
կուժերը վեր առած ջըի էին գնում: Գ. գիւղի  
ժամկոչ Սիմէօն ապերը գգակը թափ տալով դէպի  
եկեղեցին էր գիմում: Խեղճ ժամկոչ Սիմէօն ապերը  
զեռ նոր էր հասել զանգակատան դուռը, երբ  
լանկարծ լսելի եղաւ աղմկալի ձայներ, մի խառնա-  
շփոթ աղաղակ և իրարանցում: Գ. գիւղի դիմաց  
ձ. գիւղի ճանապարհին երևեցաւ մեծ բազմութեամբ  
խուռն ժողովուրդ, թէ մարդկանց և թէ կանանց  
խումբերը զանազան հայկայանքներ և անէծքներ  
թափելով՝ գիմում էին գէպի գիւղը: Դիւղի ժողո-  
վուրդը մի ակնթարթի մէջ դուրս թափեց ընդա-  
ռաջ մեծ զարմանքով, աղմուկ հանողներից հարցնելով  
— թէ Բնչ է պատահել և թէ Ինչ է պատճառը  
այդ հայկայանքի... բայց մի որոշ պատասխան չէին  
ստանում. բացի հայկայանքներից, որոնք կարկուտի  
պէս թափւում էին կանանց բերաններից... Բըու-  
տանց տունը քանդւի... Բըուտանց տղերքն կոտոր-  
ւին և այլ... Վերջապէս պարզուեցաւ ամեն ինչ.  
ամեն ոք հասկացաւ թէ գործն ինչումն է. բոլոր  
իւր էին ու հասկացաւ թէ գործն ինչումն է. բոլոր  
գիւղումն տարածուեցաւ թէ Խաչօն փախցել է Մա-  
րիամին... այս լուրը շուտով տարածուեց ժողովրդի  
մէջ և սկսեց գիւղը թնդալ: Ձ. գիւղացիները լցուեցան  
հաշտարար դատաւորի դուռը. նրանց բարձր աղմու-  
կից հաշտարար դատաւորը պարկած տեղից շուտով  
վերկացաւ և սկսեց հարց ու փորձ անել: Տանուտէ-  
քից իմացաւ ամեն ինչ. նա հասկացրաւ Տանուտէ-

թին թէ նախ հարկաւոր է շուտով մարդ ուղարկել պրիստաւի յետևից: Եկաւ պրիստաւը, հրամայեց Տանուտէրին որ տունը մի մարդ հաւաքէ և ուղարկէ անտառներն ու լեռները որոնելու փախածներին, մինչև որ Խաչօլին կը ճարեն: Գ. գիւղացիները ընդիմանալով պրիստաւի հրամանին, զիւղից էլ ոտը դուրս ըջդրին: Երկու գիւղացիների մէջ էլ տեղի ունեցան վէճեր, հայհոյանքներ և սպառնալիքներ: Այսպէսով ամբողջ երեք շաբաթ Գ. գիւղը թնդում էր. ոչ կարողացան Խաչօլին ճարել և ոչ էլ կարողացան մի քան գլուխ բերել: Գիւղի աշտուաւոր մարդկանցից մի քանիսին և Խաչօլի հայր Ալէքսանին պրիստաւը շատ ծեծեց, հայհոյանքներ տւաւ, երկար ժամանակ բանտարկել տոււաւ, ասելով մինչև աղջիկը փախցնող տղային ինձ չը հասցնէք, ես ձեզ չեմ արձակելու և մինչև վերջ այդպէս տանջելու եմ: Այդ հանգամանքներից էլ օգտագութեած ձ. գիւղացի Յարութիւնը, «Մարիամի նախկին փեսացուն», մեծ գեր էր կատարում. նա նոյն թւականում գաւառի բժշկի մօտ խոհարար էր. նա իւր աղից մի մատնաչափ տոմսակ էր բերել և տուել պրիստաւին: Բժիշկը տոմսակի մէջ խնդրում էր, որ պրիստաւը այդ դէպքի մէջ Յարութիւնին օգնէ: Նա Հապարտութեամբ մտնում էր պրիստաւի մենեակը, ամեն անգամ աղերսնով խնդրում էր որ մի կերպ դժունել տայ Խաչօլին և իւր սիրած Մարիամին: Յարութիւնը Խաչօլից աւելի էր կաշկանդուած Մարիամի սիրով... Նա, Մարիամին

փախցնելուց յետոյ, ամբողջ երեք ամիս անկողին մտաւ, նա շատ էր մտածում Մարիամի մասին. օրիորդի պատկերը նրա պառկած ժամանակը միշտ աչքին էր երևում, թէ քուն թէ արթուն, Յարութիւնը միշտ Մարիամի հետ էր խօսում... Մեզ ծանօթ Անթառամը գիւղի տակովը դալիս էր, գըլխովը դուրս գալիս, նրա բերանից շատ վատ-վատ հայհոյանքներ և սպառնալիքներ էին թափւում...

Խաչօն և Մարիամը անտառում երիտասարդ ընկերների շնորհիւ շատ ապահով էին ապրում. նրանք մէկ օր մի տեղում չէին լինում. Էս օր անտառում, փաղը լեռներում, միւս օրը այգիներում և այն:...

Քանի անգամ անտառից Խաչօն և իւր ընկերները գիմել էին վանքերի միաբանութեան, որ այնտեղ ամուսնութեան կարգը կատարեն. բայց ոչ մի տեղ չէր յաջորդել: Ճարահատեալ գիմեցին գիւղերի քահանաներին և ամեն տեղից էլ մերժում սուացան. մանտւանդ անտառից քանի անգամ երիտասարդներից գիշեր ժամանակը եկած են Գ. գիւղի, իրանց ծխատէր քահանաների մօտ աղաչել, աղերսել, նոյնպէս բացասութիւն են ստացել: Փախցրած օրից մէկ ամսից յետոյ ձայն տարածուեցաւ թէ Մ. գիւղացի տէր Հալբալէտի ձեռքով 150 մանէթով Խաչօն և Մարիամը հասան իւրանց նըպատակին, չնայած, որ դրանց մէջ մօտիկ չհասութիւն կար:

Այս վէպիկի վերջն այս է:

Ասում են, որ մէկ անգամ՝ գիշերուայ  
կիսին՝ անտառի մէջ մի առուակի վերայ, երբ Մա-  
րիամը գլուխը գնում է մի մամուազատ քարի վե-  
րայ և ընկնում քաղցը քնի մէջ, Խաչօն թողնում  
է Մարիամին ալդտեղ քնած և ինքն գնում է մօտիկ  
գիւղից հաց բերելու. օրիորդը յանկարծ աչքերը  
բանում է տեսնում, որ Խաչօն մօտը չէ. ալդտեղ  
սատիկ վախենում է: Երբ Խաչօն վերադառնում  
է, տեսնում է որ օրիորդի ամբողջ մարմինը դո-  
ղում է. և ալդ վախը մտնում է Մարիամի սիրտը.  
Խեղճ Մարիամը մի քանի ամիս Բրուտանց տանը  
մնալով, օրէ ցօր մտշում է և կարճ ժամանակից  
յետոյ մեռնում: . . .

ՎԵՐՃ.



6118  
6119  
6120 6121  
24571  
24572

2018

